


25.859

ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՂՊԵՐԱՑԻԱՅԻ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Թ. ԱՏԱՄԲՈԼՑՑԱՆ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԿՈՂՊԵՐԱՑԻՎ
ՇԱ. Բ Ժ Ո Ւ Մ Ը
ՅԵՎ
ԽՈՐՀԵՐԴԱՅԻՆ
ԿՈՂՊԵՐԱՑԻԱՆ



D. P

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿՈՈՊԻ

334
U-94

Պ. ԱՍԱՄԲՈԼՅՑՑԱՆ

ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԿՈՌԹԵՐԱՏԻՎ ՃԱՐԺՈՒՄԸ

Յ Ե Վ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՌԹԵՐԱՑԻԱՆ

(Միջազգային կոռպերատիվ տոնի առթիվ)



ՀԱՅԿՈՈԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ
1929թ.

Տարած ՀԵՐՄԵՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՆԵՐ. № 2216.
Տիրաժ 1000



24608-59

ԿՈՈԴԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԳԳԱՅԻՆ ՈՐԸ

ԿՈՌԵՐԱՑԻՎՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՏՈՒՄ ՆՇԱԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոռպերացիայի միջազգային տոնին նշանաւ-
կությունը շատ մեծ է։ Ահավասիկ ութերորդ
տարին ե, վոր մենք տոնում ենք այդ որը և
նա տարեց տարի ավելի յե մասսայական բնույթ
ստանում։ Կոռպերատիվների միջազգային միու-
թյուն «Ալիանսի» կենտրոնական կոմիտեն Մէ-
լան քաղաքում 1922 թվականին վորոշում ե
հանում՝ ամեն տարի հուլիս ամսի առաջին շա-
բաթ որը հայտարարել կոռպերացիայի միջազ-
գային որ։ Կոռպերացիայի միջազգային որվա
նայատակն ե ցուցադրել վող աշխարհին կո-
ռոպերատիվ մասսաների համերաշխատը յեվ
կոռպերատիվ կազմակերպությունների ուժը վոր-
պես կոռպերացված միլիոնավոր աշխատավո-
րության և ներականական ազատագրության մի մի-
ջոց յեվ ընդհանուր խաղաղության գրավական։

Կոռպերացիայի միջաղգային որը մեզ հա-
մար ստանում ե չափազանց մեծ նշանակու-
թյուն նաև նրա համար, վոր ամբողջ աշխար-
հում կոռպերատիվ կազմակերպությունների շուր-
ջը, գլխավորապես, սպառողական կոռպերացիայի բ-
նրա բանվորական սեկտորի շուրջը համախըմբ-
վում ե 70 միլիոնից ավելի կոռպերացված աշ-
խատավորություն, ընդգրկելով մոտ 35 տար-
բեր յերկրներ:

Մեր պայմաններում, յերբ դասակարգային
կոիզմ ամբողջ աշխարհում ստանում ե չտեսնված
սրություն, յերբ մենք ապրում ենք քաղաքա-
ցիական ահեղ կոիզմերի նախորյակին, յերբ կո-
մանիստական շարժումը բոլոր յերկրներում
գնալով ավելի և ավելի միլիոնավոր մասսա-
ներ ե գրավում ե նրանց կազմակերպում ա-
ռաջիկա դասակարգային մեծ կոիզմերի համար,
իսկ միուս կողմից՝ միջաղգային բուրժուազիան
և նրա հետ միասնական ճակատ կազմած սո-
ցիալ-դեմոկրատական հականեղափոխական կու-
սակցություններն, իրենց ուժերը համախմբած,
բոլոր միջոցները գործադրում են վճռական
հարգած հասցնելու բանվոր դասակարգի պայ-
քարին։ Այս պայմաններում, բնական ե, կոռպե-
րացիայի միջաղգային որը միատեսակ մոտեց-

ման և գնահատության արժանանալ չի կարող
յերկու հակառակ բանակների կողմից։

Այսպես, բուրժուական յերկրների կոռպե-
րատորների մեծամասնության տեսակետից՝ կո-
ռպերացիայի միջաղգային որը ըստ եյության
հանդիսանում ե մի հզորագույն միջոց բանվոր
դասակարգի հեղափոխական պայքարը մթագնե-
լու, թուլացնելու համար։ Նրանք իրենց ու-
ժորմիստական և պահպանողական քաղաքակա-
նությամբ ճգնում են հիմնավորել աշխատանքի
և կապիտալի մեջ խաղաղ, ներդաշնակ հարա-
բերություններ հաստատելու գործը։ Նրանք
միլիոնավոր կոռպերացված աշխատավորների ու-
շաղբությունը կենտրոնացնում են առորյա մանր
տնտեսական խնդիրների, նոր անդամներ գրա-
վելու, առևտուրն ուժեղացնելու և կոռպերա-
տիվները տնտեսագես ուժեղացնելու հարցերի
շուրջը։ Նրանք խոր լուսնության են մատնում
այն բալոր մարտական լոգունգները, կենսական
ինդիրները, վոր այսոր գրված ե հեղափոխա-
կան պրոլետարիատի առաջ։

Դրա հակառակ, դասակարգային հեղափո-
խական տեսակետից, կոռպերացիայի միջաղգա-
յին որը պետք ե լինի ամբողջ բանվոր դասա-
կարգի համերաշխության մի ցույց, պետք ե
ծառայի բանվորական շարժման պրոֆմիություն-

ների և հեղափոխական կուսակցությունների՝ համար միասնական պայքարի որ։ Այդ պայքարը պետք է ուղղված լինի կապիտալիզմի հարձակման, աշխատավարձի նվազեցման, աշխատանքի ժամերի բարձրացման, պատրաստվող պատերազմի և ֆաշիզմի դեմ։

Մի խոսքով, կոռպերացիան իրավես պետք է գառնա պրոլետարական մասսաների դասակարգային շահերի պաշտպան կազմակերպություն և սոցիալիզմի կառուցման համար իսկական գենք։ Այս խոշոր պայքարի գործում առանձնապես մեծ դեր ունի կատարելու խորհրդային կոռպերացիան։ Նա վոչ միայն ավանդաբարդը պետք է լինի միջազգային հեղափոխական կոռպերացիայի մարտական լոգունգները կենսագործելու խնդրում, ալ և, վորպես մեր սոցիալիստական շինարարության հզորագույն ազդակներից մեկը, պետք է ցուցադրի իր հսկայական նվաճումները և գործնական ձեռնարկումների միջոցով ավելի խորացնի իր աշխատանքները։ Նա իր կենդանի որինակով պետք է արագացնի բուրժուական յերկրների կոռպերացված մասսաների հեղափոխականացման պրոցեսը։

«Ալիանսը» հանդիսանում է միջազգային կոռպերացիայի միակ ինտերնացիոնալը, վորեկեկավարությունը գտնվում է ոեփորմիսաների

ձեռքին։ Սակայն, խորհրդային կոռպերացիան, վոր «Ալիանսի» ամենազգեցիկ անդամն եւ թե իր քաղաքական կշռով և թե քանակական տեսակետից, բավականին խոշոր աշխատանք է տարել և տանում է միջազգային կոռպերատիվ շարժման հեղափոխականացման համար։ Պետք է ասել, վոր «Ալիանսի» ազգեցությամբ տարվող աշխատանքը կոմունիստական ինտերնացիոնալի միջազգային քաղաքականության կարեոր արտահայտություններից մեկն է։ Այդ աշխատանքներով խորհրդային հասարակայնությունը մինչև որս շատ քիչ չափով ե զբաղվել, այդ պատճառով շատ կարեորե, վոր մեր կոռպերացված մասսաներն իրազեկ լինեն այն պայքարին վոր այսոր տեղի յեւ ունենում նոր և հին կոռպերատորների բանակներում։

II

“ԱԼԻԱՆՍԸ” ՅԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

Միջազգային կոռպերացիայի «Ալիանսը» (միություն) կազմակերպվել է 1895 թ. Լոնդոնում։ Կոռպերատիվ ինտերնացիոնալ կազմակերպելու միտքը հղացել է 19 րդ դարի կիսերին մի այնպիսի ժամանակ, յերբ ամբողջ բուր-

ժուազիան սարսափի մեջ եր առաջին բանվո-
րական միությունները կազմակերպելու հետե-
գանքով, վորոնց միջոցով ուժեղ պրոպագանդ
եր մղվում հոգուտ հեղափոխական դասակար-
գային պայքարի: Մարքսի կողմից առաջին ին-
տերնացիոնալի կազմակերպումն ել ավելի ան-
հրաժեշտություն ե դարձնում բոլոր տեսակի
մանր-բուրժուական ու ֆորմիստական տարրերի
համար հիմք դնելու մի այնպիսի կազմակեր-
պության, վոր հնարավոր լիներ մարքսյան ին-
տերնացիոնալի դասակարգային անողոք պայ-
քարի լոգունգին հակադրելու դասակարգերի
համերաշխության, քաղաքական կովի բացա-
ման սկզբունքը: Այդ ժամանակաշրջանը, վորի
ընթացքում կոռպերատիվ կազմակերպություն-
ները, գլխավորապես սպառողականը, բավական
մեծ ժամանակական առևտություն կա-
պիտակի շահագործման դեմ խիստ պայքար ելին
մղում, շատ հարսար ասպարեզ եր ներկայաց-
նում պրոլետարական մասսաների հեղափոխա-
կանացման դեմ պայքարելու համար:

Կոռպերատիվ ինտերնացիոնալի կազմա-
կերպման գլխավոր հեղինակներն ելին հանդի-
սանում Անգլիայում՝ քրիստոնեյական սոցիա-
լիստները և Թրանսիայում՝ ականավոր ու ֆոր-
միստ ուսուցիչները կոռպերատորներ Շարլ Ժիրը

և այլն. Հեղափոխական մարքսիստների անողոք
դասակարգային կովի թեորիային, վորպես հա-
կադրություն Շարլ Ժիրը գրում ե. «Մեր նպա-
տակները մեկ են, բայց տարբեր են նրանց
հասնելու ձևնապարհները: Մենք հնարավոր ենք
համարում ստեղծել մեծ քանակությամբ նոր
հարստություն, սակայն առանց բուրժուագիա-
յի սացվածքն եխաղը դիմում յենքարկելու:
Մենք արտահայտում ենք դասակարգային պայ-
քարի դեմ, ինդափոխական յեվ եխաղը դիմում
մերոդի դեմ: Մենք տարբերվում ենք
սոցիալիստներից նրանով, վոր անհրաժեշտ չենք
տեսնում մասնավոր սեփականության վոչչա-
ցումը, մինչև իսկ արտադրական միջոցների
նկատմամբ: Մենք խուսափում ենք հարկադրել
վերկից: Կոռպերացիան պետք ե խաղաղ ճա-
նապարհով հիմնական բարեփոխության յենթար-
կի գոյություն ունեցող տնտեսական կարգերը»:
Այս հիմնական սկզբունքներն են ուղեցույց
յեղել ու ֆորմիստների ամբողջ գործունեյության
համար: Նրանք յերկար ու ձիգ տարիներ սե-
քունդներ են դաստիարակել բարենորոգչական,
պահպանողական վոզով, թուլացնելով բանվոր
դասակարգի հեղափոխական դասակարգային
պայքարի թափը:

Իսկ Անգլիայում քրիստոնեյական սոցիա-

լիստներն, աշխատանքի և կապիտալի մեջ լիա-
կատար համերաշխություն ստեղծելու համար,
կոռպերատիվ ինտերնացիոնալի հիմքում դնում
են. «Կոռպերատնշիպ» ի գործնական սկզբուն-
քը, վորի իմաստն այն ե՝ թե բանվորները պետք
ե մասն ունենան կոռպերատիվ շինարարության
ստացած շահույթից, ձիշտ ե, կոռպերատիվ ին-
տերնացիոնալի հետագա զարգացման շրջանում
«Կոռպերատնշիպ» ի գաղափարն առանձին ըն-
դունելություն չի գտնում, սակայն, նա „Ալի-
անսի“ կաղմակերպման և ձեակերպման դոր-
ծում պակաս նշանակություն չի ունենում, կո-
ռպերատիվ ինտերնացիոնալի հիմնավորման հզր-
ագույն զենքերից մեկը բաղախական չեզոքու-
թյան սկզբունքն ե յեղել, վոր „Ալիանսի“ դո-
յության ընթացքում վճռական նշանակություն
ե ունեցել նրանց պահպանողականության հե-
տադիմական և հականեղափոխական քաղաքա-
կանությունը հաջողությամբ շարունակելու տե-
սակետից: „Ալիանսի“ յերկրորդ կոնգրեսը, վոր
տեղի ունեցավ 1896 թվին Փարիզում, նրա հիմ-
նավորումից ուղիղ մի տարի անց, վորոշում
ընդունեց քաղաքական չեզոքության մասին,
վորտեղ ասվում ե. „Ալիանսը“ չի զբաղվում վոչ
քաղաքական և վոչ ել կրոնական հարցերով: Կո-
ռպերացիան ներկայանում ե մի չեղոք ասպա-

րեզ, վորտեղ կարող են իրար հանդիպել և միա-
սին գործել միանգամայն տարբեր քաղաքա-
կան հոսանքների պատկանող և համոզմունք
ունեցող մարդիկ: Այդ չեղոքությունն ամրաց-
նելու համար, վորից կախված ե կոռպերատիվ
շարժման միասնականությունը, բոլոր այն ան-
ձինք և կազմակերպությունները, վորոնք կը ն-
դունվեն „Ալիանսի“ անդամ, պետք ե ընդունեն,
վոր կոռպերացիան հանդիսանում ե ինքնանյա-
տակ և չպետք ե զենք ծառայի այս կամ այն
քաղաքական կուսակցության համար“:

„Ալիանսի“ պատմության ընթացքում, նրա
կոնգրեսներում ձախակողմյան տրամադրու-
թյուններ յեղել են, վորոնք արտահայտվել են
ի նպաստ դասակարգային կովի. սակայն, այդ
տրամադրությունները, լինելով աննշան, վորեն
ազգեցություն չեն գործել „Ալիանսի“ ըեյակ-
ցիոն քաղաքականության վրա: Ընդհակառակը.
„Ալիանսի“ ղեկավարությունն այնքան եր պահ-
պանողական և հետադիմական, վոր „Կոպենհա-
գենի“ 1910 թվականի սոցիալիստական կոնգրե-
սի վորոշումն այն մասին, „վոր, յեթե կոռպե-
րատիվ շարժումն ինքնին յերեք ի վիճակի չե
ազատագրելու բանվորներին, այնուամենայնիվ
այդ շարժումը կարող ե իսկական զենք ծառա-
յել բանվորի համար իր դասակարգային կովի

գործում, վորի նպատակն ե իր ձեռքը զցել քա-
դաքական իշխանությունը և հասարակայնացնել
բոլոր արտադրական և փոխանակության միջոց-
ները“։ Նույնպես տապալվում ե 1910 թ. Համ-
բուրգում տեղի ունեցած „Ալիանսի“ կոնգրե-
սում։ Չնայած կոպենհագենի սոցիալիստական
կոնգրեսի ունեցած բավական խոշոր ազգեցու-
թյանը Համբուրգի կոոպերատիվ ինտերնացիո-
նալի կոնգրեսի վրա, այնուամենայնիվ, պահ-
պանողական թեվի ուժեղության հետևանքով,
դեկավարությունը դարձյալ մնում ե վերջնաե-
րի ձեռքին, վորոնք շարունակում են բուր-
ժուազիային ծառայելու իրենց քաղաքականու-
թյունը։

Համաշխարհային պատերազմի նախորյակին Գլասգո քաղաքում կայացած «Ալիանսի» 19-րդ կոնֆրենսում ել ավելի վճռական և պարզ գործոցում են հանգում—վոր կոռպերացիան չի կարող համարվել վոչ քաղաքական և վոչ ել դասակարգային շարժում։ Հին ռեֆորմիստ կոռպերատորների սիրած ձևն են հիմնվել Ռոչդելյան ազնիվ պիոներների թողած ավանդների վրա և համարել իրենց նրանց թողած գործի շարունակողները։ Սակայն, այդ տեսակետից ևս նրանք չեն կարող վոչ մի դեպքում համարվել նրանց հետևողները։ Ռոչդելյան ազնիվ պիոներների

գործը, վոր սկիզբն ե առնում 1844 թվին Անգլիայում, ունի միջազգային պատմական նշանակություն։ Այստեղ բանվոր դասակարգը, ձեռնարկելով կոռագերատիվ կազմակերպությունների, ինքն իր սեփական միջոցներով սկսեց կուվեէ կապիտալիստական շահագործման դեմ, ցուցաբերելով իր սեփական դասակարգային ուժը, վորպես պայքարի մի միջոց։ Այն հավաստիացումները, թե քաղաքական չեզոքության լոգունդը Ռոչդելյան «ազնիվ» պիոներներից ենացել, չի համապատասխանում պատմական իրողությանը։ Ռոչդելյան պիոներների և վորմի աշխատանքի մեջ չկա քաղաքական չեզոքության մասին վորեե բան։

«Ալիանսի» ուժքորմիստ հականեղափոխա-
կան ղեկավարներն ամենայն իրավամբ կարող
են համարվել Ռուչելյան ակտիվ պիոներնե-
րի մեծ գործի դաշտանաները:

Վերջին հաշվով քաղաքական չեղոքության
սկզբունքը հատկապես ուղղված եր բանվոր դա-
սակարգի հեղափոխական դասակարգային պայ-
քարի դեմ։ Զեղոքությունը լավագույն միջոց
եր կոռպերացիայի մեջ լնդգրկված միլիոնավոր
ժամաները շեղոքացնելու, հեռու պահելու բուր-
ժուազիայի դեմ ուղղված քաղաքական կովեց։

III

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ „ԱԼԻՎՆՍԸ“

«Ալիանսը» իր գոյության ընթացքում բազմիցս անդամ ազգերի խաղաղության մասին կոչեր ե արել: Նրա հիմնական ծրագրային խնդիրներից մեկը յեղել ե պատերազմի դեմ պայքարելը: Համաշխարհային պատերազմի նախորյակին «Ալիանսը» դարձել եր պացիֆիստական քառզների և գործունեյության մի կենտրոն, 1913 թվականին Գլազգոյի «Ալիանսի» կոնգրեսում դրված ե յեղել նաև պատերազմի դեմ պայքարելու խնդիրը: Այդ ժամանակ կոնգրեսի կողմից կազմակերպվում են խաղաղ ցույցեր, վորտեղ Ալբերտ Թոոման, յերկրորդի հայութեացիոնալի այուներից մեկը, կրակուա ճառ ե արտասանում պատերազմի դեմ: Նա, ի միջի այլոց, ասում ե: «Մեր ժամանակներում կոռպերատիվ շարժումն, համենայն դեպս, այնքան ե մեծ և ուժեղ, վորի վիճակի կլինի հակահարված հասցնելու մի քանի պետությունների խելագար ցանկությանը, վորոնք կցանկանային աշխարհը դցել նոր պատերազմի գիրկը»: Նույնանման յելութներ են

ունենում նաև Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի ներկայացուցիչները, վորոնք խոնտանում եյին թույլ չտալ և խանգարել իրենց պետություններին՝ իրագործելու իրենց անմիտցանկությունը պատերազմին մասնակցելու գործում: Այսուհետեւ «Ալիանսը» պատերազմի գեմմանի փեստակություն է հրատարակում: Ինչպես այդ մանիքեստը, այնպես ել տեղի ունեցող բոլոր յելությունները, ի հարկե, վոչ մի քաղաքական նշանակություն չեն ունենում. դրանք լոկ դատարկ պացիֆիստական փորձեր եյին, կատարյալ խաբերայություն եր, վոր մասսաներին ավելորդ անդամ խաբելու նպատակ եր հետապնդում:

Չի անցնում մի տարի յել այդ հավաստիացումներից ու կոչերից, յերբ սկսվում ե պատերազմը և «Ալիանսի» տարբեր յերկրների դեկալարներն անցնում են իրենց պետությունների ազգային շահերի պաշտպանության կողմը և իրենց կոռպերատիվ կազմակերպությունների միջոցով նպաստում, վոր պատերազմը հասնի իր հաղթական վախճանին: Այս բոլորի մեջ ամենաբնորոշ և ուսանելի փաստն այն ե, վոր պատերազմի դեմ բարձրագոչ հայտարարություններ անող «Ալիանսի» ականավոր լիդերները բուրժուազիային մատուցած իրենց ծառայությունների համար, հենց պատերազմի

սկզբից ստանում են պատասխանատու զինվորական պաշտոններ։

Այսպես, Անգլիայի կոռպերատիվ շարժման ղեկավար Մակսվիլը ազնվականի կոչում ե ստանում զինվորական ինտենդանտստվոյլին մատուցած ոգտակար ծարայությունների համար, Ալբերտ Թոման ֆրանսիական կարինետում գրավում ե զինվորական մինստրի պաշտոնը, իսկ ականավոր պացիֆիստ սոցիալ-դեմոկրատ Ավ. գուստ Մյուլերն ոգտվում ե հարմար առիթից և դառնում ե Գերմանիայի զինվորական կարինետի անդամ։

Այսուհետև կոռպերացիան դառնում ե համաշխարհային պատերազմի գլխավոր նեցուկներից մեկը։ Ֆրանսիայում կոռպերատիվ կազմակերպություններն իրենց ձեռնարկությունները հարմարեցնում են ուղմական նյութեր պատրաստելու համար։ Դարձյալ ֆրանսիայում այն ժամանակ 1200 կոռպերատիվներից 932-ը բացառապես զբաղված եյին ուղմական նյութերի մատակարարման գործով։ Նույն պատկերն եր ներկայացնում իրենից նաև Գերմանիան, Անգլիան և այլ պատերազմող յերկրները։ Առանց չափազանցության կարելի յե պնդել, վոր բուժուական աշխարհում չկար մի կոռպերատիվ

կազմակերպություն, վոր իմպերիալիստական պատերազմի գործիք չդառնար։

Ահավասիկ, այսպիսի վողքերգական վախճան ե ունենում «Ալիանս»ի պատերազմի գեմ վարած «պայքարը»։

IV

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

Ուտոպիստ ուժքորմիստ կոռպերատորների խաղաղ ճանապարհով, առանց դասակարգային պայքարի, սոցիալիզմին հասնելու թեորիային հակադրվել ե հեղափոխական դասակարգային անողոք և անհաշտ կովի տեսակետը։ Այդ նկատումով ահա կոռպերացիան յերբեք չի նայվել վորպես մի ինքնանպատակ կազմակերպություն, անկախ բանվոր դասակարգի կողմից կապիտալիստական կարգերի դեմ ուղղած պայքարի մյուս ձևերից։ Բանվոր դասակարգի իսկական ազատագրումը կախված ե պլուտոսարիատի դիկտատուրայի հաստատումից, կապիտալիստական իրավակարգի իսպառ վերացման ճանապարհով։

Կոռպերատիվ կազմակերպություններն, առանձնապես սպառողական առաջնահրապարականը, վոր-



պես պըոլետարական մասսաներ ընդգրկող շաբժում, պետք ե բանվոր դասակարգի հիմնական պայքարին ոժանդակող, նրա մի մասը կազմող մոժենտներից մեկը հանդիսանան:

Առաջին անգամ կ Մարքսը, հակառակ ու տոպիստ-կոռպերատորների իլլյուզիաների, տալիս ե դասակարգային պայքարի ճշմարիտ ուսմունքը և դրա հետ միասին նաև ընդգծում ե կոռպերացիայի զարգացման ճիշտ ուղիները.

Մարքսն ընդունում է, վոր կոռպերացիան, վորպես տնտեսական կազմակերպչական մի սիստեմ, հակառակ կապիտալիստական կարգերի, իր մեջ պարունակում ե կոլեկտիվիստական հիմունքներ և հանդիսանում ե „հին ձեռքի մեջ առաջին ձեղքվածքն առաջացնող» մի գործոն:

Սակայն, նա, մատնանշելով կոռպերացիայի այդ կարևոր առանձնահատկությունը, անհրաժեշտ ե համարում ընդգծել, վոր կոռպերացիան անկարող ե կապիտալիստական հասարակակարգի վերակազմությանն անցնել, քանի քաղաքական գերիշանությունը գտնվում ե բուրժուազիայի ձեռքին:

Այսպիսով, կոռպերացիայի անարգել զարգացման և աղքային մասշտաբով ծավալման համար կարևոր նախապայման ե պըոլետարիատի

դասակարգային, քաղաքական կոփվը ընդդեմ տիրապետող դասակարգի:

Այս մասին Մարքսը 1866թ. ինտերնացիոնալի ժնեվի կոնգրեսի բանաձերի մեջ ասում ե. „Կոռպերատիվ շարժումն, իր զարգացման ընթացքում ունենալով թղուկային կերպարանք, վոր տալիս են նրան իրենց ուժերի վրա հիմնը ված աշխատող սակավաթիվ վարձու բանվորները, անուժ ե և յերբեք չի կարողանա կապիտալիստական հասարակակարգը փոփոխության յենթարկել. Վորպեսզի ստեղծվի հասարակական արտադրության ազատ և կոռպերատիվ աշխատանքի խոշոր ու ներդաշնակ սիստեմ, պետք ե փոփոխության յենթարկել հասարակական ընդհանուր պայմանները: Այդ փոփոխություններն յերբեք ել տեղի չեն ունենա, յերե հասարակության կազմակերպված իշխանությունը, ուրիշ խոսնով՝ պետական իշխանությունը կապիտալիստների յեվ հողատերերի ձեռքից չանցնի բանվորների ձեռքը”:

Յերկար ժամանակ Սոցիալիստական կուսակցությունը հետևողականորեն կիրառում եր Մարքսյան այդ տեսակետը կոռպերատիվ շարժման նկատմամբ:

Այսպես, 1879թ. Մարսելյան բանվորական կոնգրեսը գտնում ե, վոր «արտադրական

և սպառողական ընկերություններն, ունենալով
հնարավորություն բարելավելու միայն փոքրա-
թիվ և արտօնյալ վիճակում գտնվող բանվորնե-
րի վիճակը, չեն կարող նկատվել, վորպես բա-
վական արժեք ներկայացնող միջոց բանվոր-
դասակարգի ազատագրության գործում։

Նույն միտքն ավելի վորոշ ասում է 1892 թ.
գերմանական սոց. գեմոկրատական համագու-
մարում ընդունված վորոշումը։ Ավելի ուշ, 1893
թվականին, գերմանական սոց.-գեմոկրատական
կուսակցության ղեկավար Բերելը ուսումնագում
հայտարարում է, վոր «Սոց-գեմոկրատիան ա-
ռանձնապես արժեք չի տալիս այն ոգուաներին,
վոր սպառողական կոռպերացիան տալիս և իր
անդամներին»։

Այսպիսով, Մարքսի տեսակետը կոռպերա-
տիվ շարժման նկատմամբ տիրապետող դեր է
կատարում մինչև 20 րդ դարի սկզբները։ Սա-
կայն, արեմայան սոցիալ-դեմոկրատական և այլ
սոցիալիստական կուսակցություններն իրենց
վարած դասակարգային հեղափոխական պայքա-
րի քաղաքականությունը հետզետե տալիս են
խաղաղ, պարլամենտական և բարենորոգչական
ընթացք։ Այդ ժամանակաշրջանումն է, վոր կո-
ռպերատիվ շարժման մեջ, ինչպես մենք վերե-
գում տեսանք, ոեֆորմիստ պահպանողական

տարրերն ավելի ևս խորացնում են իրենց ազ-
դեցությունը, կոռպերատիվ մասսայական շար-
ժումը դարձնելով բուրժուազիայի շահերին սպա-
սարկող մի կազմակերպություն։ Այնուհետև բա-
վական ժամանակ մոռացության են տրվում հե-
ղափոխական մարքսիզմի սկզբունքները և այն
փոխում ե յերկրորդ՝ դեղին ինտերնացիոնալի
գավաճանական քաղաքականության, վորի պը-
տուղներն այսոր քաղում ե միջազգային բան-
գորությունը։

Այդ բոլորից հետո, կենսական անհրաժեշ-
տություն և ներկայանում ցույց տալ իսկական
Մարքսին և վճռական ձևակերպությամբ կարել
մարքսիզմի հետագա խեղաթյուրումների ճանա-
պարհը։

Այդ ձևակերպումը տալիս է լենինիզմը, իրեն-
կեղափոխական մասսաների ակտիվության ուս-
մունք։

Լենինը, վորպես հեղափոխական մարքսիզ-
մի հետևողական շարունակողը, կոռպերատիվ
քաղաքականության խնդիրներին, մոտենալիս
յելնում և ամենից առաջ բանվոր դասակարգի
հեղափոխական դասակարգային պայքարի շա-
հերից։ Սպառողական կոռպերացիան այդ շըր-
ջանում ընդգրկել եր միլիոնավոր մասսաներ,

վորոնց ղեկավարությունն ամբողջությամբ գըտնվում եր ռեֆորմիստական - պահպանողական կոռպերատորների ձեռքին։ Բնական ե, վոր Լենինը, իր հանձարեղ իրատեսությամբ, չեր կարող նման մասսայական շարժման նկատմամբ լինել լուր հանդիսատեսի ղերում։

Լենինը ամեն մի շարժման նկատմամբ, վորտեղ տեսել ե պրոլետարական մասսաների մասնակցությունը, միշտ յերեան ե հանել ծայրահեղ շահագրգոռություն, ոգտագործելով այն իր հիմնական նպատակների՝ պրոլետարական դիկտատուրայի և սոցիալիստական հեղափոխության համար։

Այդ տեսակետից, ընկ. Լենինի ղեկավարությամբ բալշեկյան ֆրակցիայի մասնակցությունը կոպենհագենի սոցիալիստական կոնգրեսին հեղափոխական կոռպերացիայի շարժման տեսակետից ունի պատմական նշանակություն։

1910 թվականին կոպենհագենի սոցիալիստական միջազգային կոնգրեսում լենինը, մեծ նշանակություն տալով կոռպերացիայի հարցին, անձամբ մասնակցում ե կոնգրեսի կոռպերատիվ հանձնաժողովի աշխատանքներին և համագումարում պայքար մղում համաձայնողական, մաշըր-բուրժուական կուսակցությունների ղեմ, վո-

րոնք կոռպերացիան ընդունում եյին պրոլետարիատի դասակարգային կովից անկախ մի շարժում։ Նա, համաձայն շինելով կոռպերացիայի մասին առաջարկված բանաձեռի հետ, ոռւսական պատգամակորության անունից առաջարկում ե իր առանձին բանաձեռը, վորն ամբողջությամբ առաջ ենք բերում։

«Կոնգրեսը գտնում ե.

1) Վոր պրոլետարական սպառողական կոռպերատիվները բարելավում են բանվոր դասակարգի դրությունը նրանով, վոր ամեն տեսակի առետրական միջնորդների շահագործումը մեղմացնում են, վոր ազգում են աշխատանքի պայմանների վրա դրական իմաստով և լավացնում են իրենց աշխատակիցների տնտեսական դրությունը։

2) Վոր այդ ընկերությունները կարող են մեծ նշանակություն ստանալ պրոլետարիատի տնտեսական և քաղաքական մասսայական պայքարի համար, պաշտպանելով բանվորներին դրածաղուների, լոկաուտների, քաղսքական հալածանքների ժամանակ։

Մյուս կողմից կոնգրեսը նկատում ե՝

1) Վոր այն պայմանների լավացումը, վոր կարող ե սպառողական կոռպերատիվների միջոցով ստացվել, կարող են լինել չափազաց ան-

նշան, յեթե բուրժուազիայի ձեռքում յեղած արտադրական միջոցները, եքսպրոպրիացիայի չենթարկվեն, առանց վորի դժվար ե սոցիալիզմի իրականացումը:

2) Վոր սպառողական ընկերությունները չեն ներկայանում կապիտալի դեմ պայքարող անմիջական կազմակերպություններ, վորը կարող ե ստեղծել իլլյուզիա այն մասին, թե այդ կազմակերպությունները հանդիսանում են մի միջոց, վորոնց ոգնությամբ հնարավոր ե լուծել սոցիալական հարցն, առանց դասակարգային կովի և բուրժուազիայի եքսպրոպրիացիայի։
Կոնգրեսը կոչ ե անում բոլոր յերկրների բանվորներին.

1) Մտնել սպառողական կոռպերատիվների շարքերը և ամեն կերպ նպաստել նրանց զարգացմանը, պահպանելով այդ կազմակերպությունների դեմոկրատական բնույթը։

2) Սպառողական կոռպերատիվներում, անընդհատ սոցիալիստական պրոպագանդ մղելու միջոցով, նպաստել բանվորական շարքերի մեջ դասակարգային կովի և սոցիալիզմի գաղափարների տարածմանը։

3) Դրա հետ միասին ձգտել, վորպեսզի, վորքան կարելի յե, ավելի լրակատար մերձե-

ցում առաջ գա բանվորական շարժման բոլոր ձևերի մեջ։

Կոնգրեսը մատնանշում ե նաև այն, վոր արտադրողական ընկերությունները կարող են բանվոր դասակարգի պայքարում նշանակություն ունենալ, յեթե դրանք լինեն սպառողական ընկերությունների անբաժան մասերը։

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր Լենինը կապիտալիստական իրավակարգում կոռպերատիան ընդունել ե վորպես պրոլետարական հեղափոխությանն ոժանդակող մի միջոց։ Նա անհրաժեշտեց ե համարել զգուշացնել բանվորական մասսաներին, վոր սպառողական կոռպերացիայի տված առորյա ոգուտները վոչ մի գեպքում ի վիճակի չեն մազաչափ անգամ լուծելու դասակարգային պայքարի ինդիքները, վոր ուտուպիստ ռեֆորմիստ կոռպերատորների այն քարոզները, թե կոռպերացիայի միջոցով հնարավոր ե սոցիալիզմն իրականացնել առանց դասակարգային կովի ոգնության, կատարյալ խաքերայություն ե, Բացի այդ, ընկեր Լենինը միանգամայն կարելի ե գտնում, վոր կոռպերացիան անուշադրության չմատնվի. այդ գերազանցորեն մասսայական կազմակերպությունները պետք ե ծառայեն, բանվոր դասակարգի մյուս կազմակերպությունների հետ միասին,

սոցիալիզմի մեծ գործին։ Դրա համար անհրաժեշտ ե գործնական և առորյա աշխատանքների պրոպագանդի միջոցով կոռպերատիվ կազմակերպությունները գուրս բերել ու փորմիստների աղղեցությունից։

Հոկտեմբերյան հեղափոխությունը 1917թվին հեղափոխական կոռպերացիայի հետագա զղարգացման համար ստեղծում ե մի նոր պատմական դարաշրջան։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո քաղաքական գերիշխանությունն յերկրագնդի ^{1/6} մասում անցնում ե պրոլետարիատի ձեռքը։ Խորհրդային Միության արտադրական փոխարաբերությունները հիմնականապես փոփոխության են յենթարկվում։ Ստեղծվում են սոցիալիստական շինարարության համար լայն պայմաններ ու հնարավորություններ։

Ճիշտ այս պայմաններին ե վերաբերում Մարքսի կոմունիստական մանիֆեստում հայտնած այն միտքը, թե «վորպեսզի կոռպերացիան աշխատավոր մասսաների ազատազրողը դառնաչանհրաժեշտ ե, վոր նա իր սիստեմով ընդուրեկի իր մեջ վողջ հասարակությանը և հետեւ վապես ոգտվի պետական ոժանդակությունից»։ Յեզ այսպես, պրոլետարական դիկտատուրայի պայմաններում կոռպերացիան լենինի

գնահատության մեջ ստանում ե միանգամայն տարբեր բովանդակություն։ Նա մեր պայմաններում ձեռք ե բերում օհսկայական, անծայրածիր» նշանակություն։ Լենինն ասում է. «Այժմ մենք իրավացի յենք ասելու, թե կոռպերացիայի հասարակ անունը մեզ համար համազոր ե սոցիալիզմի աճման և սրա հետ միասին մենք ստիպված ենք ճանաչել սոցիալիզմի մասին մեր ունեցած տեսակետի արմատական փոփոխությունը։ Այդ արմատական փոփոխությունը նրանումն ե, վոր մենք սկզբում ծանրության կենտրոնը դնում եյինք, և պետք ե դնեյինք քաղաքական կովի մեջ։ Իսկ այժմ ծանրության կենտրոնը փոխվում ե այն աստիճանի, վոր փոխադրվում ե խաղաղ կազմակերպչական ռկուլտուրական աշխատանքի բնագավառը։

Լենինի կոռպերատիվ պլանն այնուհետեւ դառնում ե մի ուղեցույց հեղափոխական կոռպերացիայի զարգացման համար։ Խորհրդային Միության համար լենինի կոռպերատիվ պլանը դառնում ե սոցիալիստական շինարարության մի հզորագույն գործոն։ Խորհրդային կոռպերացիան իրապես դառնում ե մի հոյակապ կազմակերպություն, վորի նշանակությունը և աղղեցությունն անցնում ե կարմիր գծից գուրա

և ստանում միջազգային նշանակություն, դառնալով հեղափոխական կոռպերացիայի կազմակերպողն ու դեկավարը:

¶

ԽՈՐՀԻԴԱՅԻՆ ԿՈՌԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ „ԱԼԻԱՆՍԸ“

Հոկտեմբերյան հեղափոխությունը և պրուետարական դիկտատուրայի հաստատումը Խորհրդային Միության մեջ խոր ճեղքվածներ առաջացրեց կապիտալիստական իրավակարգում։ Մյուս կողմից ել համաշխարհային պատերազմի քայլայիշ հետևանքներից հետո բուրժուական աշխարհը կանգնած եր սոցիալիստական հեղափոխության մեծ վտանգի առաջ։ Պրոլետարիատի և բուրժուազիայի մեջ սկսված քաղաքաց. կոիվը խորհրդային սահմաններից դուրս ե գալիս և ծավալում բուրժուական յերկրներում։ Տեղի յեւնենում պրոլետարական լայն մասսաների հեղափոխականացման լուրջ պրոցեսը։

Կոռպերատիվ ինտերնացիոնալը, վոր համաշխարհային պատերազմի ամբողջ ժամանակամիջոցում անգործության եր մատնված և քայլայման վիճակին եր հասած, քաղաքացիական կոիվների ահեղ բաղիութերի պայմաննե-

բում կենդանություն ե ստանում և, միացած միջազգային բուրժուազիայի հետ, սրբազն պատերազմ ե հայտարարում բոլշևիզմի դեմ, մասնավորապես՝ խորհրդային կոռպերացիայի դեմ։

Կոռպերատիվ ինտերնացիոնալ «Ալիանսը» մնում ե իր ավանդներին հավատարիմ։ Հակառակ մարքսիստական ինտերնացիոնալի դասակարգային անողոք պայքարի և դասակարգային կոիվների սկզբունքի, նա շարունակում ե պայքարը հանուն դասակարգերի համերաշխության և, բնական ե, Մոսկվայում վերածնված մալքով ստական ինտերնացիոնալը պետք ե նորից կենդանություն տար «Ալիանսի» հետագիմական վորուն։

Այս պայքարում կարեոր տեղ են գրավում Ռուսաստանից վտարված Ցենտրոսոյուղի նախկին վարչության անդամները և ոչինչ կոռպերատորները (վերջերում դրանց միանում են նաև վրաստանից և Հայաստանից փախած վտարանդիները)։

Նրանք չտեսնված պրովոկացիա յեն բարձրացնում Խորհրդային իշխանության շուրջը Նրանք ստեղծում են հասարակական կարծիք, վոր Խորհրդային իշխանության քաղաքականության հետևանքով կոռպերացիան կործանվում ե, վոր կոռպերատիվ կազմակերպությունները վո՞չ մէ

Հնարավորություն չունեն իրենց նորմալ գործունեյությունը շարունակելու և այլն և այլն:

Այդ վատարանդիները վոչ մի միջոց չեն խնայում Խորհրդային իշխանության գեմ հականեղափություն կազմակերպելու գործում։ Յեվրոպայում այդ ժամանակ նրանց տրամադրության տակ կային հին Ռուսաստանից մնացած մի շաբք կազմակերպություններ, ինչպես՝ Յենտրոսոյուղի բյուրոները Լոնդոնում, Բերդինում, Պոլսում, Ստոքհոլմում և Փարիզում, գնման և վաճառահանման գրասենյակը՝ Նյու-Յորքում, իսկ Լոնդոնում՝ ֆողովրդական բանկը, վորոնք տուատ նյութական միջոցներ ելին հայթայթում նրանց հականեղափոխական գործունեյության համար։ Նրանք բազմաթիվ նախագծեր ելին ներկայացնում Անտանտի կառավարություններին պրոլետարական դիկտատուրայի խորտակումն արագացնելու համար։ Մինչև իսկ նրանք ներկայացրին անտեսական ինտերվենցիայի մի մանրամասն պլան, վորպետք ե պաշտպանվեր կապիտալիստական պետությունների ռազմական ինտերվենցիայով։ Յենտրոսոյուղի հին վարչության անդամները մինչև 1921 թվականը համարվում ելին «Ալիանսում» որինական ներկայացուցիչները Թուսաստանի կոռպերատիվ շաբժման։ «Ալիանսի»

անդամներ ելին նաև Վրաստանի և Հայաստանի սպառողակ. կոռպերատիվն, միությունները՝ «Յեկավշիրին» և „Հայկոռպը“, վորոնք նույնպես ունեյին իրենց հին ներկայացուցիչները։ Խորհրդային կոռպերացիայի բազմաթիվ բողոքները՝ վոր այդ մարդիկ անկոչ ներկայացուցիչներ են և չեն կարող համարվել իրավագոր, ուշադրության չեյին առնվում։ Երանք շարունակում ելին „Ալիանսի“ շաբքերում իրենց հականեղափոխական և խորհրդային աշխատանքը մեր գեմ։ Ժնեվում, 1920 թվականին, նրանց հաջողվում ե „Ալիանսի“ Կենտրոնական կոմիտեյում անցկացնել մի վորշում, վարտեղ ասվում ե. «Ալիանսի“ Կենտրոնական կոմիտեն բողոքում ե Ռուսաստանի կոռպերատիվ կազմակերպություններն անկախությունից և լիակատար ավտոնոմիայից զրկելու գեմ։ Բողոքում ե, վոր Խորհրդային իշխանությունը խառնվում ե և խանգարում կոռպերատիվ շարժման զարգացմանը։ Կենտրոնական կոմիտեն ձանաչում ե իրեկ որինական ներկայացուցիչներ նրանց, ովքեր ստացել են իրենց մանդատները ազատ դեմոկրատական կոռպերատիվ կազմակերպություններից»։

Թուսաստանի հականեղափոխական կոռպերատորները կոռպերացիայում իրենց ունեցած աղդեցությունը փորձեցին ոգտագործել յերկրի

Ներսում հականեղափոխություն առաջացնելու համար։ Նրանք պահանջում եյին Խորհրդային իշխանությունից կոռպերացիայի համար անկախ և ավտոնոմ իրավունքներ, վորպեսզի նրանց հեշտությամբ հաջողի բանվորական դիկատուրայի գեմ հակագրելու իրենց ուժը։ Սակայն, յերկրի ներսում վերջնականապես պարտվելուց հետո, այս անգամ փորձում են Խորհրդային իշխանության գեմ ոգտագործել միջազգային բուրժուազիայի ուժը և «Ալիանսի» ազգեցությունը։

Նույնպիսի աղմուկ և պրովակացիա բարձրացրին Վրաստանից վտարված մենշևիկ կոռպերատորները։ Նրանք բոլոր միջոցների դիմեցին համոզելու յերպական հասարակական կարծիքը, վոր «Յենտրոսոյուղը» Զեկայի ոգնությամբ բռնի կերպով բռնագրավել ե Վրաստանի կոռպերատիվների միությունը՝ Յեկավշիրին, վոր, շնորհիվ Խորհրդային իշխանության հակակոռպերատիվ քաղաքականության, Վրաստանի կոռպերատիվ շարժումը քայլայման և հասելու «Ալիանսը» համարյա ամբողջ յերկու տարի շարունակ Վրաստանի կոռպերացիայի իրնդրով եր զբաղվում։ Ի վերջո 1922 թվին, վորպեսզի Վրաստանում կատարվող դեպքերը ըստուգին, «Ալիանսը» փորոշում ե հատուկ պատ-

գաժավորություն ուղարկել։ Մեկնում են Թիֆլիս Վեհապոր Սերվին և Գուգոշվիլին՝ Նախկին Վրաստանի ներկայացուցիչն՝ «Ալիանսում»։ Այդ այն փուգոշվիլին ե, վոր Վրաստանի կոռպերացիայի ոգնության համար Յեկատերինուրա մեծ գումարներ և ծախսում իր անձնական կարիքների համար։

Պատգամավորությունը մեկնում է այնպիսի ժամանակ, յերբ լինտերնացիոնալը հսկայական կամպանիա յեր տանում Խորհրդային Միության գեմ, և այդ պատգամավորությունը մեկնում եր Վրաստան հատուկ հանձնարարություններով՝ Վրաստանում կատարվող դեպքերը տեսնենցիող կերպով Յեկավշիրին ներկայացնելու համար։ Այդպես ել լինում ե,

Սակայն, 1923 թ., յերբ Մոսկվա յին մեկնում «Ալիանսի» գլխավոր քարտուղար Մեյը և ականավոր կոռպերատոր Շարլ Ժիգը և ունենում են հատուկ տեսակցություն Յեկավշիրիի, Ազրիտիֆակի և Հայկոպի ներկայացուցիչների հետ, իրական փաստերի և դոկումենտների հետ ծանոթանալուց հետո նոր միայն միանգամայն պարզվում ե յերկու տարվա մեջ տեղի ունեցող աղմուկի ամբողջ պրովակացիոն բնույթը*):

*) Այդ խորհրդակցությանը մասնակցում եր Հայաստանից տողերիս գրողը։

Ժա՛մանակները փոխվում են. Խորհրդային իշխանությունը մնում է անսասան, ինտերվենցիայի և բլոկադայի բոլոր փորձերը ջախջախվում են, հանդիպելով խորհրդային սիության և միջազգային պրոլետարիատի յերկաթյա դիմադրությանը. Այսուհետև իմպերիալիստական պետությունները, նկատի ունենալով իրենց տնտեսական և քաղաքական ծանր դրությունը, ինչպես Աղդային Լիդան, անպես ել Անգլիան, 1921 թ. ականին վարուում են խորհրդային իշխանությունը դեֆակտո ճանաչել և սկսել առևտրական փոխհարաբերություններ.

„Ալիանսը“ նույնպես իր քաղաքականությունը փոխում է դեպի խորհրդային իշխանությունը, մասնավորապես՝ դեպի խորհրդային կոռպակերացիան, Յեզ այսպես, 1921 թ. Բազել քաղաքում „Ալիանսի“ կոնգրեսը 733 ձայնով ընդում 464 ի, վորպես «Ալիանսի» իրավասու անդամներ, ըստունում ե խորհրդային կոռպակերացիայի ներկայացուցիչներին. Յեզ „Ալիանսի“ կենտրոնական կոմիտեյի անդամներ, Վիլգեմի և Տառմյանցի փոխարեն, անցնում են ընկընկ. Կրասինը և Պոլովցեան (կին): Նույն բախտան և արժանանում նաև Վրաստանի մենշևիկ Գուգոշիլին և Հայաստանի ներկայացուցիչը:

Այս բոլորը ջարդություր ե անում հակա-

հեղափոխական վտարանդիների բոլոր սպասեակերները, վորոնց այլիս ուրիշ անելլք չի մնում, բայց յեթե խորհրդային կոռպակերացիայի հասցեային խղճուկ և վողորմելի վայրահաջություններ անել:

Կոռպակերատիվ ինտերնացիոնալի աշխատանքների մեջ խորհրդային կոռպակերացիայի այդ առաջին հաղթանակը բավականին շոշափելի հնարավորություններ ստեղծեց հեղափոխական կոռպակերացիայի հետագա աշխատանքները ծավալելու և աղդեցությունն ուժեղացնելու համար: Այդ տեսակետից խորհրդային կոռպակերացիայի «Ալիանսում» տարած աշխատանքներն ունեն պատմական նշանակություն: Նա վճռողական աղդեցություն և ունեցել միջազգային կոռպակերացիայի քաղաքականության վրա: «Ալիանսի» կազմակերպւթյունների և կոնգրեսների միջոցով հնարավոր ե դարձել հեղափոխական կոռպակերացիայի բոլոր հիմնական լոգունդները միլիոնավոր կոռպակերացված մասսաների մեջ հասարակայնացնելու և տարածելու համար:

Վորոնը են այն հիմնական խնդիրները, վոր խորհրդային կոռպակերացիան՝ մեծ համառությամբ և պայքարի գնով հարուցել ե կոռպակերատիվ ինտերնացիոնալի առաջ և այլպիսով դարձել կազմակերպչական կենտրոնը միջազգային հեղափոխական կոռպակերատիվ շարժման:

1. Քաղաքական չեզոքությունը

Կոռպերատիվինստերնացիոնալի վերաբերմամբ՝
մենք արդեն տեսանք, թե քաղաքական չեզության
լոգունգը վորքան մեծ ծառայություններ ե մատուցել ու փորմիստ կոռպերատորներին՝
աշխատավորական մասսաներին դասակարգային պայքարից հեռու պահելու համար։ Այժմ՝
հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի և
Յեղոպայում դասակարգային պայքարի սրման
պայմաններում, շատ դժվար կլիներ քաղաքա-
կան չեզոքության լոգունգն ոգտագործել մաս-
սաներին խաբելու համար։

«Ալիանսի» գլխավոր քարտուղար Մելք
Ստոկհոլմի համագումարին 1927 թ. ներկայաց-
րուծ իր զեկուցման մեջ գանգատվում ե, „վոր-
այս վերջին վեց տարիներն ամեն անդամ հարց-
ե բարձրացվում՝ թե ինչումն ե կայանալու «Ա-
լիանսի» քաղաքական չեզոքությունը։ Մինչեւ
Բազելի կոնգրեսը (1921 թ.) չեզոքության ըս-
կրզբունքը պարզ եր բոլորի համար և նրան
այսպես կամ այնպես հետառում ելին։ Բազելի
կոնգրեսից հետո «Ալիանսի» ֆիլիսոփայություն-
և հոգեբանության մեջ մտել են ինչ վոր ուր
տարբեր, վորոնք չեզոքության ձեւակերպման-
հարցում համարյա միշտ տարածայնություն են-

առաջ բերում։ Այս մեղաղբանքն, ի հարկե,
վերաբերում ե խորհրդային կոռպերացիային։
Ժակապես խորհրդային կոռպերացիայի ներկա-
յացուցիչները՝ «Ալիանսի» անդամ լինելու մո-
մենտից սկսած վաչ մի առիթ չեն թողել քաղա-
քական խնդիրներ դնելու «Ալիանսի» թե՛ կենտ-
րոնական և գործադիր կոմիտեների առաջ և թե՛
բոլոր կոնգրեսներում, պահանջելով այս կամ
այն լուծումը։ Այսպես Գենտի կոնգրեսում կո-
մաւնիստական ֆրակցիան պահանջեց Յորենա-
ժի լեռնագործների ընդհանուր գործադուլին
ուղարկել համերաշխության հեռազիր և միջոց-
ներ ձեռք առնել նրանց նյութական ոժանդա-
կություն հասցնելու համար։ Նույնպիսի խնդիր
հարուցվեց 1926 թ Համբուրգում տեղի ունե-
ցող կոնգրեսում Անգլիայի ածխահատների հե-
րոսական գործադուլին ոգնելու մասին։ Այնու-
հետև մայիս մեկյան տոներին և քաղաքական
այս կամ այն ցույցերին մասնակցելու խնդիր-
ներ և նման քաղաքական բնույթ կրող հարցեր
շարունակ առաջ ելին բերում մեծ դիսկուսիա
և պայքար, վոր, վերջին հաշվով, խորհրդային
կոռպերացիայի համար ծառայում եր սլրոպա-
գանգի և Յեղոպայի կոռպերացիան մասսանե-
րին կազմակերպելու լավագույն միջոց։ Այս
հանգամանքը չափաղանց մեծ անհանգստու-

թյուն և ջղայնություն եր առաջ բերում „Ալիանսի“ ռեֆորմիստ ղեկավարների մեջ, վրդոնքը մերթ Անգլիայի ներկայացուցիչների անունից՝ մերթ՝ գերմանական, պահանջում եյին վերջ տալ կոմունիստական պրոպագանդային, վերջ տալ „Ալիանսի“ քաղաքական չեզոքության սրբազն և տրադիցիոն սկզբունքի խախտման փորձերին։ Մինչև իսկ պահանջում եյին խորհրդային ներկայացուցիչներին հեռացնել “Ալիանսի” անդամությունից։ Այս բոլորը նրանց չեր հաջողվում, վրովհետեւ ռեֆորմիստների քաղաքական և սկզբունքային դիրքերը չափանց խախտուտ եյին և սեփական շարքերի մեջ առաջ եր յեկել տրամադրությունների անվճռողականություն և շփոթություն։

2. Պրոֆմիությունների նետ սեր կապ

Պրոլետարիատի դասակարգային պայքարի հաջողության տեսակետից՝ մեծ նշանակություն ե ձեռք բերում պրոֆմիությունների և կոոպերատիվ շարժման մեջ համերաշխ գործունեցությունը և նրանց սերտ կապը։ Դասակարգային պայքարի սրման պայմաններում և կոմունիստական շարժման որեց որ ծագալվող վտանգը զիմագրավելու համար լ ինտերնացիոնալի ե

Ամստերդամի պրոֆեսիոնալ ինտերնացիոնալի ղեկավարները փորձեր են անում ոգտագործել մեր գեմ նաև կոոպերատիվ ինտերնացիոնալի ուժերը։ Այդ նպատակով 1921 թ. «Ալիանսի» և Ամստերդամի ինտերնացիոնալի կողմից ստեղծվում ե մի հանձնաժողով՝ ընդհանուր հարցերի շուրջը համաձայնություն մշակելու համար։ Խորհրդային կոոպերացիայի ներկայացուցիչները, չառարկելով «Ալիանսի» արդ քայլի դեմ, իրենց կողմից առաջարկում են, վորպեսզի կոոպերատիվ և բանվորական շարժման մյուս ձևերի հետ լիակատար միասնականություն ստեղծվի, նաև համաձայնության մեջ մտնել Մոսկվայի պրոֆինտերնի հետ։ Այս հարցն անուհետեւ «Ալիանսի» համար դառնում ե սի մեծ քաղաքական խնդիր, վոր առաջ ե բերում հսկայական պայքար։ «Ալիանսի» գլխավոր քարտուղար Մեյը արդ մասին գրում ե. «Ալիանսի և Ամստերդամի ինտերնացիոնալի միջև համաձայնություն կայացնելու խնդիրը հաջողությամբ առաջ եր գնում։ Սակայն, ինչպես առում են՝ արդեն «յուղի կարասի մեջ մուկն եր ընկել»,՝ պահանջ ե գրվում համաձայնության դալ նաև Մոսկվայի պրոֆինտերնի հետ։

1926 թ. «Ալիանսի» Գենտի կոնգրեսում

հաստատում են Ամստերդամի հետ համաձայնություն ստեղծելու խնդիրը։ Խորհրդային պատգամավորության առաջարկը՝ Մոսկվայի պրոֆենտերնին ևս ընդունել, մերժում են 179 ձայնով ընդդեմ 124 ի։ Սակայն, դրանից հետո, և մինչև այժմ ել, այդ խնդիրը բազմիցս անգամ դրվում ե և լուծում չի ստանում։ Շնորհիվ այդ պայքարի, մինչև որս «Ալիանսի» և Ամստերդամի միջև կայացած այդ համաձայնությունը չի ստանում գործնական նշանակություն։ Պետք է արձանագրել, վոր պրոֆմիությունների հետ սերտ կապ հաստատելու խնդիրը դարձավ մի լավագույն միջոց՝ պրոլետարական լայն մասսաների մեջ բանվորական շարժման միանական ճակատ կազմելու լոգունդի խորացման ովտին, և մեծ չափով նպաստեց հեղափոխական կոռպերացիայի ազդեցության ծավալմանը։

3. Պայքար պատերազմի դեմ

Խորհրդային կոռպերացիայի ամենամարտական լոգունգներից մեկը հանդիսանում է պատերազմի դեմ պայքարելը։ Մենք արդեն տեսանք, թե «Ալիանսը» պատերազմի «դեմ» ինչպիսի դաշտամական քաղաքականություն տարագ և պատերազմի ընթացքում ինչպիսի բա-

զում ծառայություններ մատուցեց։ Խորհրդային ներկայացուցիչներից մեկը „Ալիանսի“ Գենտի կոնգրեսում պատերազմի վտանգի մասին մի կրակոտ ճառ ե արտասահմում և կոչ անում վողջ աշխարհի բանվորներին՝ նոր պատերազմի գեպքում իրենց զենքերն ուղղել բուրժուազիայի դեմ և սկսել անխնա դասակարգացյին պայքար։ Այս յելույթն այնքան ե սարսափեցնում „Ալիանսի“ ոեփորմիստ հակահեղափոխական ղեկավարներին, վոր գերմանական կոռպերացիայի ղեկավար կառուֆմանը առաջարկում ե այդ ճառը չարձանագրել և այն գրավել։ Ալղես ել արվում ե։ Այնուհետև խորհրդային կոռպերացիայի ներկայացուցիչները 1924 թվին, Ֆրանկֆուրտում առաջարկում են մի հատուկ հանձնաժողով ընտրել նոր պատերազմի գեմ պայքարելու գործնական առաջարկներ մշակելու համար։ Մի խոսքով՝ խորհրդային ներկայացուցչությունը վոչ մի առիթ բաց չի թողնում պատերազմի վտանգի դեմ այս կամ այն առաջարկներն ու յելույթն անելու համար։ Սակայն, «Ալիանսի» ղեկավարները վոչ միայն ընթացք չեն տալիս այդ բոլոր առաջարկներին, այլև նրանք իրենց յելույթներում մատնանշում են կոռպերացիայի կատարած մեծ ոգնությունը պատերազմին։ Շարլ Փիդը ասում ե. «Ի՞նչ ավեց

պատերազմը կոռագերացիային։ Նա բերեց նրանց
շատ ու շատ բաներ։ Կարելի յե մինչև իսկ ա-
սել, վոր կոռագերատիվ շարժումը միակն եր, վոր ամենից ավելի շատ շահեց պատերազմից։

Նոր պատերազմի վտանգը քանի գնում ա-
վելի յե սրվում։ Խորհրդային ներկայացուցիչ-
ները «Ալիանսում» այսոր ել պատերազմի դեմ
պայքարի խնդիրը դարձրել են իրենց ամենա-
կենական և համայնական հարցերից մեկը։
1930 թ. Վեննայում գումարվելիք «Ալիանսի»
կանգրեսում խորհրդային կոռագերացիայի ներ-
կայացուցիչները պատերազմի դեմ պայքարե-
լու խնդիրը պահանջում են դարձնել որակարգի
զբաղման առարկաներից մեկը։ Պատերազմի
վտանգի դեմ պայքարելու խնդրում խորհրդա-
յին կոռագերացիայի կատարած աշխատանքների
նշանակությունը քիչ չե։ Այդ աշխատանքն այ-
սունետե ել ավելի յե խորանալու և ծավալվե-
լու։ Համենայն դեպս, պատերազմի վտանգի դեմ
պայքարելու լողունգը հեղափոխական կոռագե-
րատիվ շարժման համար մնում ե ամենամար-
տական լողունգներից մեկը։

4. Պայքար Քաջիզմի դեմ

Պրոլետարական հեղափոխության և դասա-
կարգային պայքարի զարգացման և ուժեղաց-
ման զուգահեռ զարգանում ե Փաշիզմը, վոր

հանդիսանում ե միջազգային բուրժուազիայի
ավագակային ջոկատները, նրա ուազմական ու-
ժը՝ հեղափոխությունը ճնշելու համար։ Բանվոր
դասակարգի բոլոր հեղափոխական կազմակեր-
պությունները Փաշիստական կազմակերպու-
թյունների կողմից յենթարկվում են բարբա-
րոսական հարձակումների և հասնում կազմա-
լուծան աստիճանի։ Նույն վիճակին են արժա-
նանում նաև այս կամ այն հեղափոխական տրա-
մադրությունը յերկան հանող կոռագերատիվ
կազմակերպությունները։ Այս տեսակետից ա-
ռաջնությունը պետք է տալ հտալիալի Փաշիս-
տական պետությանը։ Իտալիայում կոռագերա-
տիվ կազմակերպությունները յենթարկվում են
Փաշիստական ավագակային հարձակման, նրանց
գույքը գրավվում ե, կոռագերատորները յեն-
թարկվում են գնդակահարության և բանտար-
կության։ Մի խոսքով, սկսված ե մի իւելագար
հալածանք, վորն իտալական կոռագերատիվ շար-
ժումը հասցնում ե կատարյալ կործանման դու-
րը։

Բուլղարիայում արյունարբու Ցանկովյան
կառավարության ձեռքով բոլորովին հիմնահա-
տակ ե արվում ու հրդեհվում սեփական շենքը,
գրավվում ե ստացվածքը և սպանվում գործիչ-
ները «Ասվաբաժդենիա» բանվորական կոռագե-

քատիվի, վորի դեկավարությունն ամբողջապես
գտնվում եր կոմանիստների ձեռքին։ Նույնա-
նման հալածանք տեղի յե ունենում վենայում
և այլ յերկրներում։ Կոռպերատիվ շարժման
նման չտեսնված հալածանքի գեմ, ընականորեն,
պետք ե սպասել կոռպերատիվ ինտերնացիոնա-
լի կողմից վճռողական միջների գործադրում,
միջազգային մասշտաբով բողոքների կազմա-
կերպում և այլն և այլն։ Սակայն, «Ալիանսի»
«պայքարը» չի անցնում մի քանի միամիտ և
վաչինչ չասող բանաձեռ բողոքներից այն կողմէ
ֆաշիզմի դեմ պայքարելու գործում «Ալիանսի»
քաղաքական չեղոքության լոգունդի վնասակա-
րությունը, նրա հականեղափախական բնույթը
ամենից պարզ և վճռողական կերպով յերեան
յեկավ։ Ալիանսը 1923 թ. բողոքի դիմում և ա-
նում Մուսոլինին, սակայն այդ բողոքը վորեն
հետեւանք չի ունենում։ Ընդհակառակը, Գինտ
քաղաքում տեղի ունեցող «Ալիանսի» կոնգրեսը
համբերողությամբ տանում և Մուսոլինիի հայտ-
նի Փաշիստների ներկայությունը, վորոնք, վոր-
պես լրտեսներ, յեկել ելին կոնգրեսում ֆա-
շիստների գեմ հնարավոր յելույթները կանիե-
լու համար։ 1925 թ. Մտոկհոլմի կոնգրեսի նա-
խորյակին, յերբ պարզվում ե, վոր իտալիայում
կոռպերացիալի դրությունն ել ավելի վատա-

նում ե, «Ալիանսի» կողմից մասսայական բո-
ղոքներ կազմակերպելու վոխարեն, գործադիքը
կոմիտեն վորոշում ե ընդունում, վորն ասում
ե. „Գործադիքը կոմիտեն այն կարծիքին ե, վոր
հետագա քայլերը վոչ միայն ավելորդ են, այլև
նրանք մինչև իսկ անհարմար են միջազգային
կոռպերատիվ շարժման վարկի տեսակետից»։
Այդ վորոշումից մի քանի ամիս անց փակվում
ե իտալիայի սպառողական կոռպերատիվների մի-
ությունը և գույքը գրավվում։ Այդ բոլորի դեմ
«Ալիանսը» չի կարողանում ավելի հարմար վո-
րոշում հանել, քան դիմել Մուսոլինիին և խըն-
դրել, վոր «Ալիանսը», լիակատար հավատ տա-
ծելով դեպի ձեր կառավարությունը, խնդրում
ե սպառողական կոռպերատիվների միությանը
(ազգային լիդա) ցույց տալ նույնպիսի պաշտ-
պանություն, ինչպես վոր այդ տեղի յե ունե-
նում բոլոր որինական քաղաքացիների նկատ-
մամբ։ Այնուհետև Մուսոլիայից պրոֆինտերնը
նախաձեռնությունը վերցնում ե իր վրա և ընկ-
լազովսկու միջոցով, հեռագրով, դիմում ե „Ալ-
իանսին“, առաջարկելով ֆաշիզմի կողմից պրոֆ-
միությունների և կոռպերացիայի նկատմամբ
սկսած հալածանքների դեմ պայքարելու հա-
մար կազմել միասնական ճակատ։ «Ալիանսը»
մի քանի ամիս այդ հեռագրին չի պատասխա-

Առւմ. Միայն 1926 թ. Համագործում գործադիր կոմիտեն զեկուցում ե, վոր Փաշիստների հալածանքները կոռպերացիայի նկատմամբ ավելի յեն ծավալվում, վոր այդ առթիվ կան բազմաթիվ բողոքներ և առաջարկներ: Մակայն, „գործադիր կոմիտեն մերժում ե այդ բոլոր առաջարկները, քանի վոր, համաձայն կանոնադրության, «Ալիանսը» չեզոք ե քաղաքական և կրօնական հարցերում: Ամեն մի յելույթ քաղաքական իմաստով կարող ե այնպես բացադրվել, վոր վնաս կը պատճառի իտալական կոռպերատիվ շարժմանը“:

Խորհրդային կոռպերացիան, ի հարկե, մեծ հաջողությամբ մերկացնում ե «Ալիանսի» այդ վողորմելի և անկարող քաղաքականությունը և ավելորդ անգամ մատնանշում քաղաքական չեզոքության սկզբունքի վնասակարությունը, նըրա հականեղափոխական բնույթը հեղափոխական կոռպերացիայի շահերի տեսակետից:

5. Ծրագրային յեվ կազմակերպչական խնդիրներ

«Ալիանսը» իր գոյության ամբողջ ընթացքում տնտեսական և կոռպերատիվ հիմնական խնդիրների վերաբերմամբ չի ունեցել վորոշ-

գի ծրագիր: Նա, հակառակ դրան, բավականացել ե բազմիցս անգամ դատարկ ֆրազներ գործածել և խոսել քաղաքական չեզոքության մասին, ամեն անգամ հրաժարվելով բանվոր դասակարգի առաջ ծառացած հիմնական խնդիրները լուծելու պատասխանաւորությունից: Այդ իսկ պատճառով «Ալիանսը», վորպես կոռպերատիվ ինսերնացիոնալ, վահայաց վորեե արժեք չեր ներկայացնում, ընդհանուր առմամբ, բանվորական շարժման մեջ այլ առանձին դեր և ներդործական ազդեցություն չուներ նաև միջազգային կոռպերատիվ շարժման ինդիբների նկատմամբ: ՚Իրան պերճախոս որինակ կարող ե ծառայել Փաշիզմի դեմ պայքարելու հարցը: Խորհրդային կոռպերացիայի ներկայացուցիչները համարյա բոլոր կոնգրեսներում դըքել են ծրագիր ունենալու անհրաժեշտության հարցը, սակայն այդ խնդիրը մինչեւ այժմս ել մնում ե անլուծելի: Վորովհետեւ ծրագրի հետ կապված են այն հիմնական սկզբունքները, վոր մինչև որս ել հեղափոխական և ռեֆորմիստ կոռպերատորների միջև առաջ են բերել լուրջ քաղխումներ և բուռն պայքար: Այնուամենայնիվ «Ցենտրոսոյուղի» ներկայացուցիչները «Ալիանսի» գործունեյության համար Ստոկհոլմի

կոնդրեսի քննությանն են ներկայացնում հետակայալ ծրագիրը:

«Կոռպերատիվ շարժման փորձը բոլոր յերկրներում ապացուցեց, վոր կոռպերացիան բանվոր դասակարգի պայքարի հետ անքակտելիորեն կատված և և կախումն ունի նըանից Բոլոր գեղագիրում, յերբ կոռպերացիան պաշտպանել ե, այդ համագործակցությունը տվել ե դրական հետեանքներ ինչպիս կոռպերատիվ շարժման համար, այնպես ել ամբողջ բանվոր դասակարգի համար իսկ կոռպերացիայի մեկուսացումն աշխատավորների պայքարից կործանարար ազգեցություն ե ունեցել կոռպերատիվ շարժման վրա և ծառայել ե բուրժուազիայի շահերին: Կոնդրեսն արտահայտվում ե հոգուտայն բանի, վոր միջազգային կոռպերատիվ «Ալիանսը», վորպես միջազգային կոռպերատիվ շարժման կազմակերպություն, պետք ե իրա առաջ դնի այնպիսի խնդիրներ, վորոնք բղխում են բանվոր դասակարգի շահերի պաշտպանության անհրաժեշտությունից և պնդում ե ծրագիր ունենալու արհրաժեշտության վրա, վորը պետք ե արտահայտի պրոլետարիատի քաղաքականությունը: Այդ ծրագիրը պետք ե ղեկավար ուղղեց ույց լինի մեր շարժման գործունեյության համար և լնդգծելու յե սիստեմատիկ

պ սլքարի անհրաժեշտության գործադրումն ընդդեմ թանգության, այն հարկերի և մաքսերի, վորոնք իջեցնում են մասսաների ապրուստի մակարդակը: Այդ ծրագրի մեջ պետք ե արտահայտվի իմպերիալիստական պատերազմների և ֆաշիզմի դեմ պայքարելու անհրաժեշտությունը, պետք ե մատնանշվի համագործակցությունը միջազգային կոռպերատիվ և լնդհանուր բանվորական շարժման շահերի միջն, անհրաժեշտ ե պնդել բանվոր դասակարգի բոլոր քաղաքական, պրոֆեսիոնալ և տնտեսական կազմակերպությունների համագործակցության վրա, վորպես մաքտունակությունն ուժեղացնող մի միջոցի կապիտալիստական ուժերի դեմ»:

Այս նախագիծն, ինչպես մենք տեսնում ենք, իր մեջ ամփոփում ե այն բոլոր մարտական խնդիրները, վոր այսոր դրված են բանվոր դասակարգի և կոմունիստական շարժման առաջնական ե, վոր այսպիսի սկզբունքային խնդիրների հարուցումը «Ալիանսի» մարմիններում, վոչ միայն հետապնդում ե այն անսիջապես իրագործելը, այլև նրա զլիավոր նպատակն ե՝ այդ խնդիրների շուրջը համախմբել և կազմակերպել միջազգային բանվոր դասակարգը և մի-

լիոնավոր մասսաները հանուն կոմունիստական շարժման:

«Ալիանսի» կանոնադրության մեջ կարևոր տեղ ե բռնում առանձին յերկրների կոոպերատիվ կազմակերպությունների ներկայաւուցության խնդիրը: Խորհրդային կոոպերացիայի աղքացության ծավալումը, ապա՝ «Ալիանսի» կոնդրեներում ընդդիմագիր տարրերի ուժեղացումը հարկադրում ե «Ալիանսի» ռեֆորմիստ անդամների ամենահետազիմական թերին՝ հանձինս գերժանական ներկայացուցչության, հարց դնել խորհրդային ներկայացուցիչների կենտրոնական կոմիտեյում ունեցած թիվը պակասեցնելու մասին՝ 14.ից հասցնելով 7 ի: Այդ պատճառաբանվում եր նրանով, վոր Խորհրդային Միությունը պետք ե ճանաչվի վորպես մեկ պետություն. Նրա մեջ մտնող Ռէկրայնան, Աղրբեջանը, Հայաստանը, Վրաստանը և Բելոռուսիան չեն կարող ճանաչվել ինքնուրույն պետություններ և ուրեմն իրավունք չունեն իրենց առանձին ներկայացուցիչներն ունենալ «Ալիանսում»: Այս հարցի շուրջն ստեղծվում ե չտեսնված պայքար և այն շարունակվում ե մոտ 3 տարի: 1925 թ. այդ հարցը «Յենտրոսոյուզը» բարձրացնում ե, ներկայացնելով մանրամասն տվյալներ խորհրդային սահմանադրությունից հանրապետական պետու-

թյունների կատարյալ անկախության մասին: Այսուհետեւ ինքնուրույն հանրապետությունների կողմից ևս ստացվում են իրենց ինքնուրույնությունն ապացուցող տվյալներ: Հարցի վերջնական լուծումը հետաձգվում ե մինչև Ստոկհոլմի վերջին կոնգրեսը, վորտեղ խորհրդային կոոպերացիան տանում ե կատարյալ հաղթանակ, պահանջելով իր ունեցած տեղերը „Ալիանսում“: Նույն Ստոկհոլմի կոնգրեսում խորհրդային կոոպերացիան մի ուրիշ հաղթանակ ել ե տանում:

Նկատի ունենալով, վոր „Ալիանսի“ 60 միլիոն (1927 թ.) կոոպերացված անդամներից 20 միլիոնը պատկանում ե խորհրդային կոոպերացիային, այդ պատճառով Յենտրոսոյուզն առաջարկում ե ոռուսական լեզուն ճանաչել պաշտոնական լեզու՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, և անգլիական լեզուների հավասար: Այդ հարցի վերջնական լուծումը հանձնվում ե կենտրոնական կոմիտեյին հատուկ հանձնաժողովի միջոցով հարցը լուծելու համար: Կենտրոնական կոմիտեն վորոշում ե ճանաչել ոռուսական լեզուն պաշտոնական լեզու:

Միջազգային կոոպերատիվ ինտերնացիոնալի մեջ խորհրդային կոոպերացիայի մինչև այժմ տարած աշխատանքները՝ հեղափոխական կոոպերացիայի կազմակերպման և կոոպերաց-

ված մասսաների հեղափոխականացման հարցում՝ ունենում ե միջազգային հակայական նշանակություն։ «Ալիանսի» բոլոր մարմինները՝ կոնգրեսները, կենտրոնական և գործադիր կոմիտեները, պրոպագանդայի տեսակետից լավագույն վայրեր եյին հանդիսանում։ Բացի այդ, մեծ ժամանակական մերկացումը թերթերի և գրականության միջոցով։ Այս բոլորը մեծ չափերով նպաստում եյին հեղափոխական կոռակերացիայի զարգացման ու ծավալման գործին։ Այս հանգամանքն առաջ եր բերում «Ալիանսի» ռեֆորմիստ ղեկավարների բանակում չտեսնված ատելություն և թշնամություն գեպի խորհրդային կոռակերացիան և սարսափ ազգում՝ տեսնելով կոմունիզմի հաղթական շարժման հետեւ:

Այսպիսով, «Ալիանսում» սկսվում ե լուրջ և սիստեմատիկ պայքար խորհրդային կոռակերացիայի դնմ։ Ֆրանկուրտում գործադիր կոմիտեի քննության կենտրոնական հարցը դառնում է կոմիտենի կողմից «Ալիանսի» գործունեյության մասին հարուցած քննադատությունը։ Առանձնապես մեծ հուզմունք ե արտահայտում գերմանական կոռակերատիվ բյուրոկրա-

տիան։ Այստեղ պահանջ ե դրվում, վոր «Ալիանսի» բոլոր անդամները հավաստիացում տան, թե կոմիտենի տեսակետը չեն բաժանում։ Մուսական պատգամավորությունը մեղաղրվում ե այն բանում, վոր իբր «Ալիանսի» քաղաքական չեղոքությունը խախտում ե, վոր կոմունիստական պրոպագանդ ե մղում և դրանով սպառնալիք ստեղծում «Ալիանսի» միասնականության խախտման համար։ Այդ պատճառով մի քանի անգամ հարց ե դրված յեղել հեռացնելու խորհրդային կոռակերացիայի ներկայացուցիչներին «Ալիանսից»։

Չնայած ռեֆորմիստների կատաղի հարձակումներին և պրովոկացիաներին, խորհրդային կոռակերացիայի աղջեցությունը միջազգային կոռակերատիվ շարժման վրա ավելի յե ծավալվում և խորանում, տալով նրանց նոր ու նոր նվաճումներ։

VI

ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՅԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՇԱՐԺՈՒՄԸ

Զանազան յերկրներում, կոմունիստական շարժման ծավալման և ուժեղացման հետևանքով, կոմունիստական կուսակցությունների ազ-

գեցությունը տարածվում ե նաև կոռպերատիւլ
շարժման վրա:

Տարբեր յերկրների հեղափոխական կոռպե-
րացիայի փորձի հիման վրա՝ համախմբելու և
անհամեշտ զեկավարությունը միջադային կո-
ռպերատիվ շարժման նկատմամբ ապահովելու
համար, անհամեշտ համարվեց յերրորդ կոմու-
նիստական ինտերնացիոնալին կից ստեղծել կո-
ռպերատիվ սեկցիա: Այդ կոռպերատիվ սեկցիա-
յի միջոցով ե, վոր կոմինտերնն իրագործում ե
իր դեկավարությունը:

1921 թվականին կոմինտերնի յերրորդ կոն-
գրեսն ընդունում ե կոռպերացիայի մասին թե-
ղիսներ, վորոնց միջոցով կոմունիստ կոռպերա-
տորներին տրվում ելին իրենց աշխատանքների
համար դեկավարող սկզբունքներ:

Ստորև տալիս ենք այդ թեղիսները.

1) Պոլիտարական հեղափոխությունների
դարեշրջանում հեղափոխական կոռպերացիայի
առաջ ծառացած ե յերկու խնդիր. 1) ոգնել
աշխատավորական մասսաներին քաղաքական իշ-
խանությունն իրենց ձեռքը ձգելու պայքարի-
դործում. 2) այնտեղ, ուր այդ աշխատանքը
կատարված ե, ոգնել նրանց սոցիալիստական-
շինարարության գործում:

2) Հին կոռպերացիան ձգտել ե և ձգտում

ե խուսափել հեղափոխական պայքարից և իր
աշխատանքներն ուղղել դեպի ուեֆորմիզմը: Նա
քարողում ե խաղաղ ճանապարհով սոցիալիզմին
հասնելու գաղափարը, առանց պրոլետարիատի
դիկտատուրայի իրականացման: Նա քարողում
ե կոռպերացիայի համար քաղաքական չեղոքու-
թյուն, իսկ իրականում այդ դրոշակի տակ կո-
ռպերացիայի ուժերը յենթարկում ե իմալերիա-
լիստական բուրժուազիայի քաղաքականության
նպատակներին. Նրա ինտերնացիոնալիզմը բա-
վականանում ե լոկ բառերով, իսկ իրականում
աշխատավորների միջազգային համերաշխու-
թյունը փոխարինում ե բանվոր դասակարգի և
իր յերկրի բուրժուազիայի համագործակցու-
թյան:

Հին կոռպերացիան իր այդ ամբողջ քաղա-
քականությամբ չի նպաստում հեղափոխության
զարգացմանը, այլ ընդհակառակը, նրան խան-
գարում ե. Չի ողնում, բայց վնասում ե բան-
վոր դասակարգի պայքարին:

3) Բոլոր տեսակի և ձևերի կոռպերացիան
չի կարող համագոր արժեք ներկայանալ պրոլե-
տարիատի հեղափոխական նպատակների համար:
Ամենից շատ արժեք ե ներկայացնում սպառ-
դական կոռպերացիան, Բայց նրա մեջ ել կան
այնպիսի կոռպերատի վեհը, վորոնք համախմբել

են բուրժուական տարրեր: Այդպիսիները վոչ
մի դեպքում չեն անցնի պրոլետարիատի կողմը
նրանց հեղափոխական պայքարի ժամանակ, Այդ
ընդունակ ե անելու միայն բանվորական կո-
ռոպերացիան քաղաքում և գլուղում:

4) Բոլոր կոռպերատիվներում կոմունիստ
կոռպերատորները, համապատասխան իրենց քա-
ղաքական պայմանների, պետք ե կազմակերպեն
ազատ կամ դադունի բջիջներ, վորոնք պետք ե
աշխատեն ղեկավարող դիրք ձեռք բերել կոռպե-
րատիվներում:

5) Այն գործնական խնդիրները, վոր այժմ
կանգնած են արևմտյան հեղափոխական կոռպե-
րացիայի առաջ, լրիվ կերպով կուրվագծվեն
աշխատանքի պրոցեսում: Սակայն, հնարավոր
ե դրանցից մի քանիսը հենց այժմից նշել.

ա) Կոմունիստական գաղափարների բանա-
փոր ու գրավոր ազիտացիա և պրոպագանդա:
կոռպերացիայի ազատագրումը բուրժուազիայի
և համաձայնողականների ղեկավարությունից
ու նրանց ազգեցությունից:

բ) Կոռպերացիայի մերձեցումը կոմունիս-
տական կուսակցություններին և հեղափոխական
պրոֆմիություններին, կոռպերացիայի ուղղակի
թե անուղղակի մասնակցությունը քաղաքական
պայքարին՝ գործադուլներին, ցույցերին և քա-

ղաքական կամպանիաներին մասնակցելու ճա-
նապարհով, նյութական ոժանդակություն կո-
մունիստական կուսակցությունների թերթերին,
գործադուլներին, լոկատուտի յենթարկված բան-
վորներին:

գ) Պայքար միջազգային բուրժուազիայի
իմպերիալիստական քաղաքականության դեմ,
մասնավորապես՝ Խորհրդային Միության և այլ
յերկրների ինտերվենցիայի դեմ:

դ) Վոչ միայն գաղափարական կապ ստեղ-
ծել տարբեր յերկրների բանվորական կոռպերա-
տիվների միջև, այլ և ունենալ գործնական կապ
միմյանց հետ:

յե) Պայքար մզել Խորհրդային Միության
հետ շուտափույթ առեւտրական փոխարարերու-
թյուններ ստեղծելու համար:

զ) Բուրժուական յերկրների կոռպերա-
տիվ կազմակերպությունները կոնցեսիաների
միջոցով լայն մասնակցություն պիտի ունենան
յորհրդային Միության ընական հարստություն-
ների շահագործման խնդրում:

կոմինտերնի յերբորդ կոնգրեսից հետո, կո-
մինտերնի բոլոր կոնգրեսները հատկապես ըզ-
մինտերնի պարագաները կոռպերատիվ շարժ-
քաղվում են միջազգային կոռպերատիվ շարժ-
ման խնդիրներով և մշակում ավելի գործնա-
կան և մանրամասն դիրեկտիվներ: Բացի այդ,
կան և մանրամասն դիրեկտիվներ:

1922 թ. և 1924 թ. տեղի յեն ունենում կոմունիստ կոռպերատորների միջազգային կոնֆերենցիաներ, վորոնք նույնպես խոշոր նշանակություն են ստանում կոմունիստների կոպերացիայում կատարելիք աշխատանքների տեսակետից։ Յեվ իսկապես բոլոր յերկրներում, կոմունիստական շարժման գարգացման և ծավալման զուգընթաց, կոմկուսակցությունները բավական զգալի նվաճումներ են անում կոռպերատիվ շարժման մեջ։ Այսպես՝ Ֆրանսիայում մի քանի տարի յե ինչ Փարիզի ամենախոշոր կոռպերատիվ «Բելլվելուազ»-ը զտնվում է կոմունիստների ղեկավարության ներքո։ Նույն Փարիզում կան նաև մի քանի ուրիշ կոմունիստական կոռպերատիվներ՝ ճաշարանների «Նոր ընտանիք» կոռպերատիվ ընկերության, կոռպերատիվ «Լա-Ֆրոդերնել» և ուրիշները։ Ամբողջ Ֆրանսիայում այժմ մոտ 100 կոռպերատիվ կազմակերպություններ գտնվում են կոմունիստների ձեռքին։ 1920 թ. ֆրանսիական կոռպերատիվ կոնգրեսում կոմունիստ պատգամավորները կազմում եյին 28 հոգի, 1922 թ. հասնում ե 200-ի, իսկ 1928 թ. այդ թիվը դառնում ե 815։

Գերմանիայի Եսսեն քաղաքում կայացած համագերմանական կոռպերատիվ համագումա-

բում 60-ի չափ կոմունիստ պատգամավորներ են ընտրվում։ Բերլինի կոռպերատիվի վերջին ընտրություններին կոմունիստները սահմանում են բոլոր ձայների $36^0/0$ -ը։ Իսկ Հալլում՝ 75 տոկոսը։ Սակայն, Գերմանիայում այսպիսի կոռպերատիվներ, վորոնք ունեն կոմունիստական վարչություններ, դեռևս այնքան ել շատ չեն։ Այդպիսիները կան մի քանի վաշ-մեծ արդյունաբերական քաղաքներում (Միթղե-բուրգ, Հալլա, Շվարցենբերգ, Լեմբախ և այլն) կոմունիստական կոռպերատիվները Գերմանիայում մեծ հալածանքների յեն յենթարկվում վերադաս կոռպերատիվ մարմինների կողմից։ 1926 թ. կոռպերատիվների կենտրոնական միությունը սպառնում ե՝ անգլիական ածխահատների գործադրութին ոժանդակելու դեպքում։ Հեռացնել միությունից նման կոռպերատիվներին։

Անգլիայում նույնպես նկատելի յե կոմունիստների վորոշ ազգեցությունը կոռպերատիվներում։ Բավական ուժեղ ե կոմունիստների ազգեցությունը Զեխո-Մավակիայի կոռպերատիվությունը։ Այսաեղ բազմաթիվ կոռպերատիվների վարչություններ գտնվում են կոմունիստների ձեռքին։

Նույնպիսի հաջողություն ունեն կոմունիստները նաև այլ յերկրներում։

Ինչպես տեսնում ենք, կոմունիստական կուսակցությունների ազդեցությունը միջազգային կոռպերատիվ շարժման վրա վնչ միայն գաղափարական ե, այլև նա ընդունել ե խիստ գործնական բնույթ. նա ստացել ե մասսայական առողյա աշխատանքների կերպարանք։

Այդ տեսակետից կոմունիստների այդ գործնական աշխատանքների ծավալումը կոռպերացիայում ստանում ե՝ բանվոր գասակարգի ընդհանուր պայքարի շահերի տեսակետից՝ շատ մեծ նշանակություն։ Կոռպերացիայում կոմունիստների այդ գործնական աշխատանքների ծավալումն աչքի առաջ ունինալով, կոմինտերնի V-րդ կոնգրեսը 1924 թ. մի-քանի խիստ գործնական վորոշումներ ե կայացնում, վորոնք կոմունիստների հետագա աշխատանքների ճիշտ ղեկավարության տեսակետից մեծ նշանակություն են ունենում։

Այդ վորոշումներն ասում են.

1) Կոմունիստական կուսակցության բոլոր անդամները պետք ելինեն կոռպերացիայի ակտիվ անդամներ, նրանք պարտավոր են կոռպերատիվներում ստեղծել կոմունիստական բջիջներ, կապելով նրանց պրոլետարական այլ ընդդիմադիր տարբերի հետ և դարձնելով այն ֆրակցիա։ Ամեն մի յելույթ պետք ե հիմնավոր

կերպով նախապատրաստվի կոմունիստական բջիջներում, վորից հետո նրա վորոշումները պետք ե սիստեմատիկորեն կենսագործ վեն կոմունիստների կողմից։

2) Կոռպերատիվ աշխատանքներին վերաբերող բոլոր հարցերը պետք ե քննության առարկա դառնան կոմունիստական կուսակցության բոլոր մարմինների կողմից։ Բացի այդ, բոլոր կուսակցական մարմինները պետք ե յեռանդուն պաշտպանություն ցույց տան կոռպերատիվ աշխատանքներին։

Կոռպերատիվները պետք ե մասնակցություն ունենան ինչպես քաղաքական, այնպես ել տնտեսական բնույթ կրող բոլոր մարտական կազմակերպություններին։

3) Ամեն մի կոմունիստական կուսակցություն կոռպերատիվ աշխատանքների համար պետք ե տրամադրիչիր յեռանդուն և ընդունակ նկերներին։

4) Կուսակցական մամուլը կոռպերատիվ հարցերին պետք ե մեծ տեղ տա։ Ամենորյաթերթերը, հնարավորության սահմաններում, պետք ե հրատարակեն կոռպերատիվ հավելվածներ։ Կոմունիստական կոռպերատիվ գրականությունն ավելի մեծ չափով պետք ե հրատարակվի ու տարածվի, քան մինչև այժմս ե յեղել։

5) Կոմինտերնի 3 և 4 ըդ կոնգրեսների, ինչպես և յերկրորդ պրոֆինտերնի կոնգրեսի վորոշումները պրոֆմիությունների և կոռպերացիայի միասնաբար գործելու մասին, պետք ենցկացնվեն բոլոր յերկրներում:

Այսպիսով, կոմունիստների նվաճումները միջազգային կոռպերատիվ շարժման մեջ հակայական են, նրանք գնալով ավելի յեն մասսայական բնույթ ստանում են դառնում են, ու պետք եղանակն ել, մեր սոցիալիստական հեղափոխության մեծ գործում, մարտական մյուս կազմակերպությունների հետ միասին, կարեոր գործոններից մեկը:

Միջազգային կոռպերացիայի որը այդ տեսակետից հանդիսանալու յե մի լավագույն միջոց՝ կոռպերացիայի հեղափոխական ուժերի հավաքման, միլիոնավոր կոռպերացված մասսաներին կոմունիստական մարտական լոգունգների շուրջը կազմակերպելու և նրանց տանելու գեղի առաջիկա դասակարգային ահեղ բաղխումները: Իսկ Խորհրդային Միության մեջ միջազգային կոռպերացիայի որը լինելու յե սոցիալիստական շինարարության հսկայական նվաճումների ցուցադրման որ, և այնուհետև ընդգծելու յե իր առաջիկա նոր նվաճումների ուղին:

Բարժուական յերկրներում՝ դասակարգացին քաղաքական անողոք պայքար հանուն պըռլետարիատի գրկտատուրայի հաստատման, իսկ մեզ մոտ՝ սոցիալիզմի կառուցման գործում նորու նոր նվաճումներ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կոռպերացիայի միջազգային տոնի նշանակությունը	3
2. «Ալիանսը» և նրա զարգացման հտապնդը	7
3. Պատերազմը և «Ալիանսը»	14
4. Հեղտիվուական կոռպերացիան և նրա դարձացման հտապնդը	17
5. Մորհքային կոռպերացիան և «Ալիանսը»	28
I Քաղաքական չեղոքությունը	36
II Պրոֆմիությունների հետ սերտ կապը	38
III Պայքար պատերազմի դեմ	40
IV Պայքար փաշիզմի դեմ	42
V Ծրագրային և կազմակերպչական խընդուրներ	46
6. Կոմինտերնը և միջազգային կոռպերատիվ շարժումը	53



ՀՀ Ազգային գրադարան



NL0197789

ԳԻՆԸ 20 ԿՈՎ.

310